

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ՈՐՈՇՈՒՄ**

"....." .....2017 թ. N.....Ն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 13-Ի N 474-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասը, 24-րդ հոդվածի 1-ին մասը, «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածը, 10-րդ հոդվածի 4-րդ մասը և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 63-րդ, 685-րդ և 688-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի ապրիլի 13-ի ««Երևանի գեղարվեստի պետական ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպությունը «Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիա» հիմնադրամի վերակազմավորելու և գույք տրամադրելու մասին» N474-Ն որոշման՝

- 1) 4-րդ կետում «տնօրեն-ռեկտորի» բառերը փոխարինել «տնօրենի(ռեկտորի)» բառերով.
- 2) N1 հավելվածում՝
  - ա. 36-րդ կետի 5-րդ ենթակետը շարադրել նոր խմբագրությամբ  
«5) եթե նա նշանակվել է ի պաշտոնե՝ նրա զբաղեցրած պաշտոնին այլ անձ նշանակելու կամ նրա զբաղեցրած պաշտոնի վերացման դեպքում.».
  - բ. 59-րդ կետից հանել «՝հոգաբարձուների խորհրդի որոշմամբ» բառերը.
  - գ. 62-րդ կետից հանել «Հոգաբարձուների խորհրդի կողմից» բառերը.
  - դ. 72-րդ կետում «ի շահ ակադեմիայի» բառերից հետո լրացնել «հիմնադրի,» բառը, իսկ «ակադեմիայի հիմնադիրը,» բառերը հանել.

ե. 104-րդ կետից հանել «Ակադեմիայի մասնաճյուղերն են Գյումրի և Դիլիջան քաղաքների մասնաճյուղերը:» նախադասությունը.

զ. 128-րդ կետում «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ՀՀ կրթության և գիտության նախարար Լևոն Մկրտչյան**

## ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

### **«Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի ապրիլի 13-ի N 474-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ**

ՀՀ կառավարության 2017 թ. ապրիլի 13-ի «Երևանի գեղարվեստի պետական ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպությունը «Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիա» հիմնադրամի վերակազմավորելու և գույք տրամադրելու մասին» N 474-Ն որոշման /այսուհետ՝ Որոշում/ 11-րդ կետի 1-ին ենթակետի 1-ին՝ «Երևանի գեղարվեստի պետական ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպությունը սահմանված կարգով ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն /այսուհետ՝ գործակալություն/ պետական գրանցման է ներկայացրել ՀՀ կրթության և գիտության նախարարի կողմից հաստատված փոխանցման ակտը և Որոշումը հաստատված հավելված 1-ով հաստատված «Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիա» հիմնադրամի կանոնադրությունը: Սակայն գործակալությունը հիմք ընդունելով «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքը մերժել է «Երևանի գեղարվեստի պետական ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպության դադարեցումը և «Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիա» հիմնադրամի գրանցումը: Գործակալության առաջարկությունների և դիտողությունների համաձայն ՀՀ կրթության և գիտության նախարարությունը քննարկման է ներկայացնում «Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի ապրիլի 13-ի N 474-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որի ընդունման դեպքում կիրականացվի «Երևանի գեղարվեստի պետական ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպության դադարեցման և «Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիա» հիմնադրամի գրանցման գործընթացը:

## **ՏԵՂԵԿԱԼՔ N 1**

**«Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի ապրիլի 13-ի N 474-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտության կամ բացակայության մասին:**

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի ապրիլի 13-ի N 474-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտություն կամ բացակայություն չկա:

## **ՏԵՂԵԿԱԼՔ N 2**

**«Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի ապրիլի 13-ի N 474-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի բյուջեում ծախսերի և եկամուտների էական ավելացման կամ նվազեցման մասին**

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի ապրիլի 13-ի N 474-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի բյուջեում ծախսերի և եկամուտների էական ավելացում կամ նվազեցում չի սպասվում :